# ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՏԻՐԱՑԱՎ «ՇԵՅԽԻ ԳԱՎԱԹԻՆ»

## ՀԱՅ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒԲԱՅՈՒՄ

Գերազանց հանդես եկան հայ շախմատիստները Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում ավարտված «Շեյխի գավաթ» անունը կրող միջազգային ավանդական 3-րդ մրցաշարում: Հիշեցնենք, որ այս գավաթի առաջին խաղարկության հաղթող էր դարձել Վլադիմիր Հակոբյանը: Այս տարի այդ հաջողությունը կրկնեց Հայաստանի նախկին չեմպիոն, գրոսմայստեր Կարեն Ասրյանը: Տանելով 4 հաղթանակ եւ 5 հանդիպում ավարտելով ոչ-ոքի արդյունքով նա հաղթող դարձավ մի մրցաշարում, որի 100 մասնակիցներից 33-ը գրոսմայստերներ էին, 20-ը միջազգային վարպետներ: Ուրախալի է, որ մեկնարկային տուրերում ձեռք բերած ամրության հսկա պաշարը (4,5 միավոր 5 հնարավորից) եւ մրցաշարային ճկուն մարտավարությունը թույլ տվեցին մեր երիտասարդ շախմատիստին պահպանել իր առաջատար դիրքերը ողջ մրցաշարի ընթացքում: Արդյունքների ամփոփելուց հետո պարզվեց, որ Կարեն Ասրյանը գործակիցներով գերազանցել է 7 հանրաճանաչ գրոսմայստերների, որոնք եւս վաստակել էին 6,5-ական միավոր: Ըստ գրաված տեղերի հաջորդականության նրանք են. Յան Էլվեստը (Էստոնիա, 2630), Ալեքսեյ Ալեքսանդրովը (Բելառուս, 2610), Արտաշես Մինասյանը (2554), Ալեքսանդր Մոտիլյովը (Ռուսաստան, 2601), Եվգենի Վլադիմիրովը (Ղազախստան, 2612), Պավել Կոցուրը (Ղազախստան, 2576) եւ Եվգենի Երմենկովը (Բուլղարիա, 2478):

Անչափ կարեւոր էր Կարենի հաղթանակը 5-րդ տուրում Ռուսաստանի ուժեղագույն շախմատիստներից մեկի գրոսմայստեր Վալերի Ֆիլիպովի (2632) նկատմամբ:



Կարեն Ասրյանը Դուբայի մրցաշարում

### ՖԻԼԻՊՈՎ - ԱՍՐՅԱՆ

**1. d4 d5 2. c4 e6 3. Ձc3 Ձf6 4. cd ed 5. Փg5 Փe7 6. e3 O-O 7. Փd3 Ձbd7 8. Թc2 c6 9. Ձf3 Նe8 10. O-O Ձf8 11. h3 g6 12. Փh6 Ձh5 13. Նab1 Ձg7 14. b4 a6 15. a4 Փf5 16. Փ:g7 Փ:d3 17. Թ:d3 Ա:g7 18. Նfc1 Ձd7 19. b5 ab 20. ab Նa3 21. bc bc 22. Թc2 Թa8 23. g4 Փd6 24. Նb2 Ձf6 25. g5 Ձe4 26. Ձ:e4 de 27. Ձd2 Նa5 28. Ձ:e4**



**28 ... Փa3 29. d5 Ն:e4 30. Թ:e4 Փ:b2 31. Ն:c6 Թd8 32. d6 Նa1+ 33. Աg2 Թ:g5+ 34. Աf3 Թh5+ 35. Թg4 Թd5+ 36. Թe4 Թd1+ 37. Աg3 Թg1+ 38. Թg2 Փe5+, սպիտակները հանձնվեցին:**

Առաջին անգամ էր Դուբայի ավանդական մրցաշարում խաղում մեր փորձառու գրոսմայստերներից մեկը Արտաշես Մինասյանը: Ինչպես նշեցինք, նույնքան միավորով ամփոփիչ աղյուսակում նա գրավեց 4-րդ տեղը, որը նույնպես մեծ հաջողություն է այսպիսի ուժեղ կազմով մրցաշարում: Անշուշտ, շատ կարեւոր է եւ այն հանգամանքը, որ մրցաշարը հրաշալի առիթ էր մեր գրոսմայստերների համար մեկ ամիս հետո սկսվելիք Եվրոպայի անհատական առաջնությունից առաջ լավ մարզավիճակ ձեռք բերելու իմաստով:

Գրոսմայստեր Աշոտ Անաստասյանը հիանալի էր խաղացել Դուբայում նախանցյալ տարի, արժանանալով 3-րդ մրցանակի: Այս անգամ եւս նա հոյակապ մեկնարկեց (3 հաղթանակ առաջին 3 տուրերում), բայց հետո, ցավոք սրտի, անհաջողության մատնվեց եւ, ի վերջո, 5 միավորով եզրափակեց 3-րդ տասնյակը:

### ՊԱՎԱՍՈՎԻՉ - ՄԻՆԱՍՅԱՆ

**1. e4 e6 2. d4 d5 3. Ձd2 Փe7 4. Ձgf3 Ձf6 5. e5 Ձfd7 6. Փd3 c5 7. c3 Ձc6 8. O-O a5 9. Նe1 cd 10. cd Թb6 11. Ձb1 Ձ:d4 12. Ձ:d4 Թ:d4 13. Ձc3 Թb6 14. Թg4 g6. 15. Փh6 Ձc5 16. Փb5+ Փd7 17. Փ:d7+ Ձ:d7 18. Նac1 d4 19. Ձa4 Թb4 20. b3 Նd8 21. Թh3**



**21. ...b5 22. Ձb2 Թa3 23. Ձd3 Թ:a2 24. Փg7 Նg8 25. Թ:h7 Ն:g7 26. Թ:g7 Թ:b3 27. Նcd1 Ձf8 28. Թh8 a4 29. h4 a3 30. h5 gh 31. Ձf4 d3 32. Ձ:h5 Նd4 33. Թg8 Փh4 34. Նf1 d2 35. Թh8 a2 36. f4 Աe7 37. Ձf6 Թe3+ 38. Աh1 Ն:f4 39. Ն:f4 Թ:f4 40. Թh5 Փe1 41. Թe2 Թh4+ 42. Աg1 Թd4+ 43. Աh2 Ձg6, սպիտակները հանձնվեցին:**